ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 փետրվարի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

16
(2682)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մենք հետախուզական տեղեկություններ ունեինք, որ սեպտեմբերյան մարտերի ընթացքում Ադրբեջանը շատ ավելի մեծ հարձակում էր նախապատրաստում: Իրանի գործողություններն ու հայտարարությունները, սակայն, նպաստեցին, որ իրադրության հետագա վատթարացումը դադարի»,- հայտարարել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի նորանշանակ տեղակալ Վահան Կոստանյանը Վաշինգտոնում գործող Al-Monitor կայքի հետ զրույցում: Նա պնդել է, որ Իրանի գործողություններն անցած տարվա աշնանը նպաստել են Հայաստանի դեմ ադրբեջանական հարձակման դադարեցմանը: Այս հայտարարությունները նորանշանակ փոխարտգործնախարարի կողմից իսկապես տարակուսելի են, եթե հաշվի առնենք այն հայտարարությունները, որոնք 2022 թվականի սեպտեմբերյան երկօրյա մարտերից հետո անում էին ՀՀ իշխանությունները: Օրինակ՝ 2022 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը Հանրային հեռուստաընկերության եթերում Պետրոս Ղազարյանի հետ հարցազրույցի ժամանակ հայտարարել էր, թե այդ իրադարձությունների կանգնեցման ամենամեծ հեղինակը ԱՄՆ-ն է եղել: «Մեծ է եղել ԱՄՆ աջակցությունը, բայց ես չեմ ուզում որեւիցե ձեւով դա գերադասել, օրինակ, Ֆրանսիայի կամ Ռուսաստանի միջամտությունից», - ասել էր նա: Այդպիսի հայտարարություններ եղան նաեւ ամերիկյան կողմից: ԱԺ նախագահի հայտարարությունից մեկ օր առաջ էլ՝ սեպտեմբերի 16-ին, ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը խոսել էր մեր բանակի գործողությունների մասին եւ ասել, թե դրա շնորհիվ նաեւ դիրքեր ենք հետ բերել: «Այն, ինչ ձեր ասած 10 քառակուսի կիլոմետր թվերի շրջանակներում իրեն հաջողվել է, բայց դրանից հետո եղել են դիրքեր, որոնք մեր գործողությունների արդյունքում նորից հետ են անցել մեր տնօրինման տակ: Վեց դիրքերի մասին է խոսքը. ես ամբողջական թվերը չհրապարակեմ. շատ հնարավոր է՝ դա նորից փոփոխությունների ենթարկվի»,- նշել էր նա: Առաջին անգամը չէ, որ իշխանության տարբեր ներկայացուցիչներ նույն հարցի վերաբերյալ տարբեր հայտարարություններ են անում. այսպես, ի վերջո, Հայաստանի միջազգային հեղինակությունն է կասկածի տակ դրվում:



Ընդդիմությունը երեկ Լաչինի միջանցքի մասով խորհրդարանական լսումներ էր նախաձեռնել: Լսումներին մասնակցում էին ինչպես ընդդիմադիր պատգամավորները, այնպես էլ արտախորհրդարանական ընդդիմության մի շարք ներկայացուցիչներ: Ընդդիմության նախաձեռնած քննարկման ժամանակ իսկական անակնկալ էր ՔՊ-ական Գուրգեն Արսենյանի ներկայությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Արսենյանի մասնակցությունը անակնկալ է եղել ոչ միայն ներկաների, այլ նաեւ սեփական թիմակիցների համար: Արսենյանը ընդդիմության լսումներին մասնակցելու իր որոշումը չի քննարկել թիմակիցների հետ, միանձնյա որոշում է կայացրել: ՔՊ-ին մոտ կանգնած մեր աղբյուրները հայտնեցին, որ թեեւ որեւէ մեկին արգելված չի եղել մասնակցել այդ լսումներին, բայց որեւէ մեկի մտքով անգամ չի անցել, որ իրենց թիմից ինչ-որ մեկը կարող է գնալ ու մասնակցել մի քննարկման, որտեղ հավաքված է հայկական քաղաքական դաշտի գրեթե ողջ ընդդիմադիր թեւը: ՔՊ-ականներից շատերն իրենց աշխատասենյակներում ուղիղ եթերով ընդդիմության քննարկմանը հետեւելիս են եղել, իրենց թիմակցին տեսել ու անակնկալի են եկել: Գուրգեն Արսենյանը, թերեւս, որոշել է գնալ ու միայնակ իր «կռիվը տալ» ընդդիմադիրների հետ: Իսկական ֆուրոր էր ոչ միայն Արսենյանի մասնակցությունը, այլ նաեւ նրա ելույթը, որտեղ նա հերթական հակաարցախյան թեզը առաջ տարավ՝ հայտարարելով. «Մենք չենք կարող ռիսկի ենթարկել երեք միլիոն հայերի՝ հանուն 120 հազար արցախցիների»:

Հունվարի 19-ին Ազատ գյուղում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով մահացած զինծառայողների քրեական վարույթով ուշագրավ հանգամանքներ են ի հայտ գալիս: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ողբերգական դեպքից 2 շաբաթ առաջ սպա Ե. Հ.-ն զեկուցագիր է գրել, որ ցանկանում է ազատվել աշխատանքից կամ, ինչպես ընդունված է ասել, զորացրվել: Ինչո՞ւ է նա այս քայլին գնացել ռազմական ոստիկանության ստուգումներից հետո, ի՞նչ է կատարվել, առհասարակ, կացարանի ներսում. հուսանք՝ այս հարցերի պատասխանը կստանանք քննության ընթացքում, երբ խոսի սպան: Նշենք, որ Armlur.am-ը գրել էր՝ 15 զինվորներին կյանքից զրկելու գործով սպայի պաշտպանը ներգրավվել է գործին. ՀՀ քննչական կոմիտեի քննիչները հերթական անգամ հարցաքննության են կանչել սպային, սակայն սպան հրաժարվել է ցուցմունք տալ: Նշենք, որ սպան բանավոր ցուցմունք էր տվել, պատմել էր, որ կրակը թեժացնելու համար է բենզին լցրել, իրեն մեղավոր է համարում, եւ կարող են իրեն դատել, սակայն երկրորդ անգամ հրաժարվել է ցուցմունք տալ. անգամ պաշտպանի ներկայությամբ է նա հրաժարվել ցուցմունք տալ:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը առիթը բաց չի թողնում Հայաստանի տնտեսական աճով հպարտանալու: Չնայած սրան՝ որոշ ոլորտներում Վիճակագրական կոմիտեն անկում է արձանագրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախորդ տարվա 11 ամիսներին Հայաստանում մսի արտադրության ոլորտում անկում է արձանագրվել, ընդ որում՝ պակասել են տավարի, խոզի եւ թռչնամսի արտադրության ծավալները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ անցյալ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներին Հայաստանում մսի արտադրության ծավալները 5.5 տոկոսով պակասել են: ՀՀ վիճակագրական կոմիտեի հաշվետվություններից պարզ է դառնում, որ ոչխարի մսի արտադրության ծավալներն են զգալի ավելացել (5.5 տոկոսով): Խոզի մսի արտադրության ոլորտում արձանագրված անկումը լուրջ մտահոգել է մասնագետներին. խոզի մսի արտադրության ծավալները մեկ տարվա ընթացքում նվազել են 19.5 տոկոսով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ տավարի մսի արտադրության ծավալները 6.2 տոկոսով են պակասել: Ստացվում է, որ անգամ պետական աջակցության՝ խելացի անասնագոմ կառուցելու, կենդանի ձեռք բերելու վերաբերյալ ծրագրերը դրական ազդեցություն չեն ունեցել մսամթերքի արտադրության ծավալների վրա, բայց հոգ չէ. էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի կարծիքով «մարդիկ սկսել են ավելի լավ ապրել»:

ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ՝ ՄԻՄՅԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՐԵԿԱՄ ՉՈՒՆԻ

Հայ-ռուսական հարաբերություններն օր օրի լարվում են, կողմերը ամենաբարձր մակարդակով զարբերաբար մեղադրանքներ են հնչեցնում միմյանց հասցեին:

Նախ Նիկոլ Փաշինյանն է Ռուսաստանի ռազմական ներկայությունը «սպառնալիք» համարում Հայաստանի համար, իշխանության տարբեր ներկայացուցիչներ ռուսական կողմին մեղադրում են Լաչինի միջանցքը փակելու հարցում Ադրբեջանին աջակցելու համար, իսկ, ահա, երեկ էլ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն է Հայաստանին մեղադրել էր, թե «տարիներ շարունակ օկուպացրել է Ադրբեջանի 7 շրջանները»: «Ռուսաստանն այս ընթացքում առաջարկել է բազմաթիվ տարբերակներ, որոնք Հայաստանի դեռեւս նախորդ ղեկավարությունը ոչ այնքան դրական էր ընդունել՝ փորձելով պահել տարածքները, որոնց Երեւանը նույնիսկ չէր էլ հավակնում: Ադրբեջանը վերադարձրել է այն տարածքները, որոնք պատկանում են իրեն»,-ասել էր Լավրովը:

Լավրովի այս հայտարարությունը շատ քննարկվեց հայաստանյան փորձագիտական եւ հասարակական շրջանակների կողմից, սակայն պաշտոնական Երեւանը դեռեւս ձեռնպահ է մնում ռուսական կողմին արձագանքելուց:

ArmLur-ը այս առիթով զրուցել է քաղտեխնոլոգ Կարեն Քոչարյանի հետ:

-Պարոն Քոչարյան, ինչո՞ւ Լավրովը Հայաստանի հասցեին նման մեղադրանքներ հնչեցրեց, ինչի՞ հետեւանք էր սա:

-Ես չեմ կարող բացատրել՝ ինչու Լավրովը նման հայտարարություն արեց, կամ ում էր այն ուղղված՝ այսօրվա իշխանություններին, թե նախկին: Հնարավոր է՝ Ռուսաստանը որոշել է փոխել իր ռազմավարական գործընկերոջը Հարավային Կովկասում կամ ուզում է դուրս գալ Հարավային Կովկասից. դեռ չեմ հասկանում՝ ինչ է կատարվում, ժամանակը ցույց կտա, երեւի թե պետք է սպասել զարգացումների: Իսկ թե ինչ հետեւանքներ կունենա, դա թող որոշեն նրանք, ովքեր արդեն 5 տարի է՝ զբաղվում են այս հարցով. չեմ կարծում, որ լավ են զբաղվում, բայց, այնուամենայնիվ, հնարավոր է՝ կան ինֆորմացիաներ, որոնց մենք չենք տիրապետում:

-ՌԴ ԱԳՆ-ն վերջերս նաեւ բավականին կոշտ արձագանքել էր հայ-ադրբեջանական սահմանին ԵՄ դիտորդական առաքելության տեղակայման որոշմանը. Լավրովի երեկվա հայտարարությունը սրա շարունակությո՞ւնն էր:

-Այն, որ Ռուսաստանին դուր չի եկել ԵՄ դիտորդական առաքելություն տեղակայելու որոշումը, եւ ամեն ինչ անելու են, որ դա իրականություն չդառնա, նրանք հենց առաջին օրվանից չեն թաքցրել:

-Հայաստանը մինչ օրս պաշտոնապես չի արձագանքել ռուսական կողմի հայտարարություններին: Պարոն Քոչարյան, Ձեզ համար հասկանալի՞ է՝ ինչու է Հայաստանը խուսափում արձագանքել, ինչու է մեր ԱԳՆ-ն լռում:

-Իսկ Հայաստանում, ընդհանրապես, որեւէ ինստիտուտ հիմա աշխատո՞ւմ է. հենց դա ինձ համար ամենահասկանալին է, որ Հայաստանից լոկ բառեր են մնացել, ոչ մի ինստիտուտ չի գործում, դրա համար էլ արձագանք չկա:

-Կարո՞ղ ենք արձանագրել, որ ողջ պատմության ընթացքում հայ-ռուսական հարաբերությունները երբեւէ այսքան լարված չեն եղել:

-Հայ-ռուսական հարաբերությունները վաղուց են լարված, ավելին՝ Հայաստանն այսօր չունի բարեկամ, հասել է այն վիճակին, որ վաղուց արդեն սուբյեկտ չէ, միայն օբյեկտ է: Իսկ հայ-ռուսական հարաբերությունները բավականին լարված են հիմա: Միայն այն հայտարարությունները, որ արվում են ՌԴ ԱԳՆ մակարդակով շատ բաց տեքստով, վկայում են սրա մասին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՊԱՌԻԿԻՑ՝ ԿԱՆԽԻԿ

280 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐՈՎ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆ

Արարատ Միրզոյանն ու կինը՝ Գոհար Աբաջյանը, առանձնատուն են գնել 2022-ի դեկտեմբերին՝ 112 մլն դրամով: Առանձնատունը Կոտայքի մարզի Քասախ գյուղում է: Այն Երեւանի եւ Կոտայքի մարզի սահմանագծին է՝ հարակից Դավիթաշեն վարչական շրջանին: Այս մասին երեկ հրապարակում էր ունեցել «Սիվիլնեթ»-ը եւ նաեւ ներկայացրել առանձնատան կադրերը:

Ինչպես պարզել է լրատվամիջոցը, փաստացի Միրզոյանը «Արմսվիսբանկ»-ում գրավադրված առանձնատունը տեղափոխել եւ գրավադրել է «ՀայէկոնոմԲանկ»-ում: Ամուսինները առանձնատունը ձեռք են բերել 112 մլն դրամով (ըստ Կադաստրի՝ շուկայական արժեքը 115 մլն դրամ է): Հատկանշական է, որ պայմանագրում նշված չէ վարկի տոկոսավճարը:

Ընդհանուր առմամբ, «ՀայէկոնոմԲանկ»-ում Միրզոյանն ու Աբաջյանը մինչեւ 345 մլն դրամի սահմանաչափով վարկի հնարավորություն են ստացել, որից 115 մլն-ն արդեն ուղղվել է առանձնատան ձեռք բերմանը: Այս պայմանագիրն ու գնումը մի քանի հարցեր են առաջացնում: Ինչպե՞ս է Արարատ Միրզոյանը գնել արդեն իսկ բանկում գրավադրված տունը, ինչպե՞ս է իմացել դրա մասին: Ինչպե՞ս է նա գնել այն, առանց կանխավճարի, եւ, առհասարակ, պետք է ստուգել այս գույքի ծագումնաբանությունը:

Նկատենք՝ Արարատ Միրզոյանն այն պաշտոնյաներից էր, որ հեղափոխությունից հետո դառնալով Ազգային ժողովի նախագահ՝ փորձել էր ապառիկով հեռուստացույց գնել, բայց չէր ստացվել:

Այժմ նա, փաստորեն, իրեն կարողանում է թույլ տալ 280 հազար դոլար արժողությամբ առանձնատուն գնել վարկավորմամբ: Ինչպե՞ս է նա պատրաստվում մարել այս վարկը, երբ ամենապարզ հաշվարկներն էլ անգամ ցույց են տալիս, որ նա ամեն ամիս պետք է մեկ մլն դրամից ավելի գումար ուղղի վարկի մարմանը, իսկ, որպես նախարար, Արարատ Միրզոյանը հենց 1 մլն դրամից ավելի գումար է ստանում, իսկ նրա կինը գործազուրկ է: Ստացվում է՝ ամբողջ աշխատավարձը Արարատ Միրզոյանը պետք է ուղղի վարկի մարմանը:

26 ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔ

Հայաստանի պետական գերատեսչություններում կան վարչություններ եւ բաժիններ, որոնք տեւական ժամանակ է՝ թափուր են: Որքան էլ իշխանությունները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, փորձում են գրավիչ դարձնել պետական ոլորտը, սակայն փաստ է, որ պետական գերատեսչությունների կայքերում չեն դադարում առկա թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները, քանի որ մարդիկ խուսափում են պետական աշխատանքի անցնել: Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը կանդրադառնա ՀՀ առողջապահության նախարարությանը: Ըստ հաստիքացուցակի՝ առողջապահության նախարարը պետք է ունենա երեք տեղակալ, սակայն այս պահին մեկ հաստիք թափուր է, ինչպես նաեւ, օրենքով սահմանված երեք խորհրդականի փոխարեն, նախարար Անահիտ Ավանեսյանն այս պահին ունի մեկ խորհրդական: Ուսումնասիրելով գերատեսչության պաշտոնական կայքը՝ տեղեկացանք, որ, օրինակ, նախարարության դեղորայքային քաղաքականության բաժինը պետ չունի, եւ այն ղեկավարվում է ժամանակավոր պաշտոնակատարի կողմից: Պետ չունի եւ ժամանակավոր պաշտոնակատարով է աշխատում նաեւ ֆինանսատնտեսագիտական վարչությունը: Ընդհանուր առմամբ, այս պահին նախարարության կենտրոնական ապարատում թափուր է 13 աշխատատեղ: Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալությունն այս պահի դրությամբ եւս ունի 13 թափուր հաստիք, որոնց թվում են գլխավոր ֆինանսիստների եւ ավագ մասնագետների հաստիքները: Սա վկայում է մեկ բանի մասին. կամ իշխանությունները չեն կարողանում կադրեր գտնել, կամ էլ այդ կադրերը չեն ցանկանում աշխատել այս իշխանությունների հետ:

ՔՆՆԻՉՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿ ՉՈՒՆԵՆ

ՀՀ քննչական կոմիտեն չի կարողանում Զինվորական քննչական վարչության համար բաժնի պետի տեղակալներ գտնել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այս պահին զինվորական քննչական բաժնում պետի տեղակալի 9 թափուր հաստիք կա, որի համար տեւական ժամանակ է՝ չեն կարողանում պրոֆեսիոնալ կադրեր գտնել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ շատերն էլ խուսափում են Զինվորական քննչական վարչություն գնալ, քանի որ գործերը շատ են, ու քննիչները բավականին ծանրաբեռնված են, քիթ սրբելու ժամանակ չունեն: Այս իրավիճակի մասով մեկնաբանության համար «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ քննչական կոմիտե: Մեր հարցմանն ի պատասխան՝ հայտնեցին, որ թափուր հաստիքներ կան, որոնք պարբերաբար համալրվում են, սակայն արտառոց կադրային հոսքեր համակարգում առկա չեն:

ՀԱՅՑԵՐԸ ԿՄԵՐԺՎԵՆ

«Ես կարծում եմ, որ Հաագայի դատարան ներկայացրած Հայաստանի ու Ադրբեջանի հակընդդեմ հայցերը կմերժվեն»,- ArmLur.am-ի հետ զրույցում նշեց ՀՀ նախկին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանը:

Զրուցակցի կարծիքով՝ «Ադրբեջանը՝ ընդդեմ Հայաստանի» հայցը կմերժվի անհիմն լինելու պատճառով, իսկ Հայաստանի հայցը, ըստ Ալավերդյանի, հնարավոր է՝ մերժվի, քանի որ գործը քննող դատավորներն իրենց նախնական ելույթներում ձեւակերպումներ են արել, որոնք, ընդհանուր առմամբ, արդարացնում էին Լաչինի միջանցքը փակած ադրբեջանցի կեղծ բնապահպաններին. «Դատավորները մինչեւ անգամ ասում էին՝ եթե փորձեն նրանց ցույցը ցրել, ապա դա կլինի միջազգային իրավունքի կոպիտ խախտում: Դրա համար էլ ես մտահոգ եմ՝ ինչպիսին կլինեն դատարանի նախնական եզրակացությունները: Ես չեմ կարծում, որ վճիռը կլինի՝ հօգուտ մեզ, կամ այդ վճռից հետո Ադրբեջանը կդադարեցնի Լաչինի շրջափակումը, հատկապես որ դատարանի որոշումները կրում են զուտ խորհրդակցական բնույթ»,- ասում է Ալավերդյանը:

Արդեն հայտնել ենք, որ Հայաստանը եւ Ադրբեջանը հակընդդեմ հայցեր են ներկայացրել ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարան: Հայաստանը Հաագայի դատարանից պահանջում է հրատապ միջոց կիրառել եւ պարտավորեցնել Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը, որը 50 օրից ավելի է՝ փակ է:

ԿԱՐՈՂ ԵՆ ՏՈՒԳԱՆՎԵԼ

Հայաստանի գազալցակայանների եւ բենզալցակայանների սեփականատերերը կարող են տուգանվել, եթե զուգարանով չապահովեն քաղաքացիներին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում լրացումներ, փոփոխություններ են կատարվելու: Օրինակ՝ առեւտրի իրականացման վայրերը, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առեւտրի կետերը օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով չապահովելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ 50.000-70.000 դրամի չափով:

Տեղեկացնենք, որ դեռեւս 2018 թվականին՝ թավշյա հեղափոխությունից հետո, Նիկոլ Փաշինյանի կառավարությունը սկսեց պարտադրել գազալցակայանների սեփականատերերին բարձրորակ զուգարաններ կառուցել, դրանք սահմանված չափանիշներով շահագործել: Այսօր եթե շրջայց կատարեք ՀՀ մարզերով, ապա կպարզեք, որ գազալցակայաններ կան, որոնց զուգարանները գտնվում են խիստ անմխիթար եւ հակահիգիենիկ վիճակում, որոնցից օգտվելն ուղղակի հակացուցված է: Բացի այս, նկատենք նաեւ, որ Հայաստանի միջպետական ճանապարհներին եւս հասարակական զուգարաններ չկան:

ԵԱՏՄ ՆԻՍՏ

ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԴՐԱԿԱՆ Է

Հայաստանը շահագրգռված է ԵԱՏՄ-ում գազի ընդհանուր շուկայի ձեւավորման մասին միջազգային պայմանագրի նախագծի չկարգավորված հարցերի շուրջ հնարավորինս արագ կոնսենսուսի հասնելու հարցում: Այս մասին Ալմաթիում տեղի ունեցած Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստի ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«ԵԱՏՄ ինտեգրացիոն համագործակցության մեկ այլ կարեւոր բաղադրիչ եմ համարում էներգառեսուրսների ընդհանուր շուկաների ձեւավորումը: Այս համատեքստում կնշեմ մեր շահագրգռվածությունը գազի ընդհանուր շուկայի ձեւավորման մասին միջազգային պայմանագրի նախագծի չկարգավորված հարցերի շուրջ հնարավորինս արագ կոնսենսուսի հասնելու հարցում եւ եւս մեկ անգամ հաստատում եմ դրանց լուծմանը կառուցողական մոտեցում ցուցաբերելու մեր պատրաստակամությունը»,- ընդգծեց Փաշինյանը:

Վարչապետը մեծապես կարեւորեց պարենային անվտանգության տեղական եւ միութենական համակարգերի զարգացումը:

«Կարծում ենք, որ ապագայում ԵԱՏՄ անդամ պետությունների կոլեկտիվ պարենային անվտանգության համակարգի ստեղծման նպատակով համագործակցության ակտիվացումը հնարավորություն կտա բարձրացնել առկա ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, զսպել գնաճը, ապահովել պարենային ապրանքների հասանելիությունը եւ ակտիվացնել փոխադարձ առեւտուրը»,- ասաց Փաշինյանը:

Վարչապետը ԵԱՏՄ էլեկտրաէներգիայի միասնական շուկայի հարցերի շրջանակում Հայաստանի համար արդիական է համարում «Էլեկտրաէներգիայի միջպետական փոխանցման ծառայությունների հասանելիության կանոնների» հիմքում ամրագրված ճկուն եւ բազմավեկտոր մոտեցումները:

«Մասնավորապես, կանոնները հնարավորություն կտան ապահովել ԵԱՏՄ անդամ երկրների էներգետիկ համակարգերին միացումը Միության անդամ չհանդիսացող երկրի միջոցով (մեր դեպքում Վրաստանի միջոցով)՝ դրանով իսկ ստեղծելով տեխնիկական եւ իրավական նախադրյալներ փոխշահավետ շուկայական պայմանագրեր կնքելու համար»,- նշեց Փաշինյանը:

Վարչապետը Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի լիարժեք գործարկման նպատակով նաեւ անհրաժեշտ է համարում սինքրոնացնել ԵԱՏՄ երկրների գործողություններն այս ուղղությամբ, ինչը թույլ կտա ձեւավորել հուսալի «թվային կմախք» ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժը ապահովելու համար:

«Թվային տնտեսության զարգացումը եւ թվային տեխնոլոգիաների ներդրումն օբյեկտիվ անհրաժեշտություն է միասնական թվային տարածքի ձեւավորման համար: Այս համատեքստում կնշեմ միջպետական տեղեկատվության փոխանակման համակարգի գործիքների, ինտեգրացիոն էֆեկտով թվային նախագծերի ստեղծման եւ զարգացման արդիականությունն ու մեծ պահանջարկը»,- եզրափակեց Փաշինյանը:

Նիկոլ Փաշինյանը նաեւ Ալմաթիում մասնակցել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների, ինչպես նաեւ ԵԱՏՄ-ում դիտորդ Ուզբեկստանի վարչապետի հետ մասնակցել է «Թվային գործընկերությունը նոր իրականությունում» թվային համաժողովի լիագումար նիստին: Նա առաջին հերթին շնորհակալություն հայտնեց ղազախական կողմին համաժողովի կազմակերպման համար, որը դարձել է թվայնացման խնդիրների եւ թվային զարգացման հեռանկարների քննարկման արդյունավետ հարթակ:

Նրա խոսքով՝ Միության թվային օրակարգի հիմքերից մեկը պետք է լինի «կարգավորիչ ավազատուփերի» ռեժիմի համատարած օգտագործումը: «Կարգավորիչ ավազատուփերի» հատուկ իրավական ռեժիմների կիրառման շնորհիվ՝ կկրճատվեն թվային փոխակերպման նախագծերի իրականացման ժամկետները, իսկ ներկայացված նախագծերի որակը կբարձրանա, ինչն իր հերթին կարագացնի համաեվրոպական մասշտաբով թվային նախագծերի մեկնարկը:

«Վերջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ ժամանակակից մարտահրավերները կարող են ակնթարթորեն փոխել մեր կյանքի սովորական ընթացքն անցանկալի ուղղությամբ, եթե չձեռնարկվեն համատեղ եւ հարմարադեպ միջոցներ»,- նշեց նա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը փետրվարի 3-ին ընդունել է Համաշխարհային բանկի (ՀԲ) Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն Սեբաստիան Մոլինեուսին եւ ՀԲ հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարոլին Գեգինատին: Համաշխարհային բանկի ներկայացուցիչներն իրենց հերթին պատրաստակամություն են հայտնել շարունակելու ընթացիկ արդյունավետ համագործակցության ուղղությամբ ջանքերը: Սեբաստիան Մոլինեուսը շնորհավորել է Վահե Հովհաննիսյանին ֆինանսների նախարարի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ վստահություն հայտնել, որ ավանդույթ դարձած արդյունավետ փոխգործակցությունը հետագայում եւս կշարունակվի: Կողմերն անդրադարձել են ընթացիկ համատեղ ծրագրերին, մասնավորապես՝ ՀԲ-ի կողմից տրամադրվելիք բյուջետային աջակցության գործընթացին, եւ նախանշել են առաջիկա համատեղ գործողությունները:

ՄԻԱՑԵԼ Է ՑՈՒՅՑԻՆ

Վաշինգտոնում՝ Կապիտոլիումի շենքի առաջ, ամերիկահայերը ցույց են անցկացրել՝ իրենց բողոքը հայտնելով Լաչինի միջանցքի արգելափակման դեմ: Բողոքի ակցիային է մասնակցել նաեւ ԱՄՆ կոնգրեսական Ֆրենկ Փալոնը: «Այսօր Կապիտոլիումի մոտ ցուցարարները բողոք էին հայտնում Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի անօրինական եւ անմարդկային շրջափակմանը: Ես հպարտությամբ կանգնեցի նրանց կողքին՝ կոչ անելով, որ Միացյալ Նահանգները պատասխանատվության ենթարկի Ալիեւին Արցախի ժողովրդի դեմ մարդու իրավունքների խախտումների համար», - գրել է Փալոնը: Ըստ գրառմանը կից լուսանկարի՝ ցուցարարները ակցիային են ներկայացել Հայաստանի դրոշով եւ Արցախի շրջափակումը դադարեցնելու, Ադրբեջանին ռազմական աջակցությունը դադարեցնելու եւ այլ կոչեր պարունակող պաստառներով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀՀ-ՈՒՄ

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը փետրվարի 3-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Անն Լույոյին: Դեսպան Լույոն, անդրադառնալով ֆրանսիական խոշոր կազմակերպությունների ներկայությանը Հայաստանի տնտեսությունում, հայտնել է ֆրանսիական կողմի պատրաստակամությունը շարունակելու ցուցաբերել աջակցություն ինչպես կարճաժամկետ ծրագրերի, այնպես էլ երկարաժամկետ ռազմավարական բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար իրավիճակին, ինչպես նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի ուղղությամբ փոխգործակցության զարգացման հնարավորություններին:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ԳՈՐԾՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի հատկառես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում ավարտվել է Երեւան քաղաքում գործող ակումբներից մեկում տեղի ունեցած զենքի գործադրմամբ խուլիգանության դեպքի նախաքննությունը:

2021թ. մայիսի 14-ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությամբ իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝նույն օրը՝ժամը 02:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Մյասնիկյան փողոցում գործող «Վարդա» ակումբի սրահում երկու հաճախորդ ուսերով հպվել են միմյանց, ինչի վերաբերյալ պարզաբանումներ կատարելու նպատակով դուրս են եկել ակումբից: Նրանց են միացել բազմաթիվ անձինք, որից հետո վիճաբանությունը շարունակվել է ակումբի ավտոկայանատեղիում: Վիճաբանության ժամանակ վերոնշյալ հաճախորդներից մեկը՝Արարատի մարզի 34-ամյա բնակիչ Գ. Խ.-ն, անտեսելով տարածքին հարակից բնակելի տների, բանուկ տարածքի, ինչպես նաեւ տվյալ պահին տարածքում գտնվող բազմաթիվ անձանց ներկայությունը, մի խումբ անձանց մասնակցությամբ հրահրել է ծեծկռտուք: Խուլիգանության մասնակիցներն աղմկել են, հայհոյել, ոտքերով ու ձեռքերով փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց՝ պատճառելով տարբեր բնույթի մարմնական վնասվածքներ:

Քննությամբ պարզվել է, որ Գ.Խ.-ն, իր անձի կարծեցյալ առավելությունները ներկաների մոտ ընդգծելու մոլուցքով տարված, ապօրինի կերպով ձեռք բերած եւ իր մոտ պահվող 5,6մմ տրամաչափի ակոսափող փամփուշտներով լիցքավորված զենքով կրակոց է արձակել հակառակ կողմի մասնակիցների ուղղությամբ՝ նրանցից մեկին պատճառելով մարմնական վնասվածք: Այնուհետեւ 34-ամյա տղամարդը եւ միջադեպի մյուս մասնակիցները, հակադրվելով ակումբի աշխատակիցների եւ հաճախորդների կողմից հնչեցրած հանդարտվելու կոչերին, չբավարարվելով կատարվածով, շարունակել են հայհոյել եւ բռնություն գործադրել միմյանց նկատմամբ: Գ.Խ.-ն եւ միջադեպի մյուս մասնակիցները շուրջ 30 րոպե տեւողությամբ կատարած դիտավորյալ խուլիգանական գործողություններով խաթարել են ակումբի բնականոն գործունեությունը, խախտել են ակումբի աշխատակիցների եւ հաճախորդների, ինչպես նաեւ հարակից տարածքում գտնվող եւ երթեւեկող քաղաքացիների հանգիստն ու գիշերային անդորրը՝ նրանց մոտ առաջացնելով տագնապի, վախի զգացում. բազմաթիվ հաճախորդներ պաշտպանվելու համար դիմել են փախուստի:

Խուլիգանության մասնակիցների գործողությունները դադարել են միայն ոստիկանության աշխատակիցների՝ դեպքի վայր ժամանելուց եւ 34-ամյա տղամարդուն ու ներկաներից շատերին բերման ենթարկելուց հետո: Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Գ.Խ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասին, եւ 235-րդ հոդվածի 1-ին մասով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասին: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Վերջինիս վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթում, որով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան՝ըստ էության քննելու: Դեպքի այլ մասնակիցների, ինչպես նաեւ հրազենի իրացման դրվագներով նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՎՐԱԵՐԹԻ Է ԵՆԹԱՐԿԵԼ

Փետրվարի 2-ին՝ժամը 21:00-ին, «Մարտակերտի շրջանային բուժմիավորում» ՓԲԸ-ից հաղորդում է ստացվել, որ մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներով իրենց մոտ է ընդունվել Մարտակերտ քաղաքի 26-ամյա բնակչուհի Ա. Գ.-ն եւ իր 2-ամյա որդի Ս. Բ.-ն:

Դեպքի վայր մեկնած շրջբաժնի պետի տեղակալ Ա.Հայրապետյանը պարզել է, որ նույն օրը ժամը 20:30-ի սահմաններում, Մարտունու շրջանի 25-ամյա բնակիչ Ա.Ա.-ն 0.169 մգ/լ ոչ սթափ վիճակում վարելով «ՎԱԶ 21214» մակնիշի ավտոմեքենան, Ազատամարտիկների փողոցի թիվ 83 շենքի դիմացի ճանապարհահատվածում վերջիններիս վրաերթի է ենթարկել:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Ստուգմամբ զբաղվում է ոստիկանության Մարտակերտի շրջանային բաժինը:

ՆԳ նախարարության բոլոր ստորաբաժանումներն ու ծառայությունները հանրապետության տարածքում շարունակում են իրականացնել շուրջօրյա համակարգված աշխատանք՝ հանցավորության, այդ թվում՝ անսթափ վիճակում տրանսպորտային միջոց շահագործող վարորդների դեմ պայքարը, դժբախտ ելքով դեպքերն ու պատահարների նվազեցնելու ուղղությամբ:

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է 3–ՐԴ ԱՆԳԱՄ

15 զինվորներին կյանքից զրկելու գործով սպայի պաշտպանը ներգրավվել է գործին եւ արդյուքում ՀՀ քննչական կոմիտեի քննիչները գնացել են հերթական անգամ հարցաքննության, սակայն սպան հերթական անգամ հրաժարվել է ցուցմունք տալ: Նշենք, որ սպան բանավոր ցուցմունք էր տվել, պատմել էր, որ կրակը թեժացնելու համար է բենզին լցրել, իրեն մեղավոր է համարում, սակայն երկրորդ անգամ է հրաժարվում ցուցմունք տալ: Անգամ պաշտպանի ներկայությամբ նա հրաժարվել է ցուցմունք տալ:

Հիշեցնենք, որ 2023 թվականի հունվարի 25-ին որոշում էր կայացվել ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով (Զինվորական պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ), եւ հունվարի 26-ին ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ն կալանավորվեց, ՀՀ ՊՆ N զորամասի կոմունալ շահագործման ծառայության պետ, զորամասի հակահրդեհային պաշտպանության եւ փրկարար աշխատանքների ծառայության պետ, մայոր Մ.Ս.-ն եւս կալանավորվել է: Այժմ քննարկվում է սպայի հարցը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՀՀ ՊՆ համակարգի վարչության պետի տեղակալը դիմել է դատարան ընդդեմ Պաշտպանության նախարարության: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կառլեն Միրզոյանը դիմել է դատարան՝ պահանջելով 22.10.2022թ. թիվ 0537 հրամանն անվավեր ճանաչելուն, հայցվորին աշխատանքում վերականգնելուն եւ ՀՀ ՊՆ համակարգի վարչության պետի տեղակալ՝ 39 դասակարգմամբ, հաստիքի նշանակելուն, 22.10.2022թ. թիվ 0537 հրամանի արձակմամբ հայցվորին չվճարված աշխատավարձը եւ դրան հավասարեցված վճարումները հաշվարկելուն եւ վերջինիս վճարելուն պարտավորեցնել:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Կենտրոնում երեկ արտառոց դեպք է տեղի ունեցել: Կենտրոնի բնակարանի բնակիչներից ՌԴ քաղաքացի Յ. Ջիլինսկայան տանը կախվելու միջոցով փորձել է ինքնասպանություն գործել, ինչը կանխվել է ամուսնու կողմից:

Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ նա փորձել է այդ քայլին գնալ, քանի որ այս տարվա հունվարի 29-ին մահացել է իր դուստրը, եւ նա այդ ցավին չի կարողանում դիմանալ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹԱՔՑՐԵԼ Է ՏՐԱԿՏՈՐԸ

ԱՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ստացված տեղեկությունների իրացման արդյունքում պարզվել է, որ 23.02.2017թ. կնքված ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի հիման վրա ԱՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից քաղաքացի Ռ.Գ.-ի տիրապետմանը փոխանցված Agrotron-180 4WD E2 մակնիշի անիվավոր տրակտորը այն վարող անձի կողմից 2020թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Քաշաթաղի շրջանի Միջնավան համայնքից գաղտնի եւ հափշտակելու նպատակով տեղափոխվել էր ՀՀ Սյունիքի մարզ, իսկ այնուհետեւ՝ՀՀ Արմավիրի մարզի քաղաք Էջմիածին, որից հետո Ռ.Գ-ն ԱՀ կառավարության որոշմամբ սահմանված աջակցությունից օգտվելու նպատակով պետական մարմին է ներկայացրել տեղեկություններ այն մասին, որ հիշյալ տրակտորը մնացել է 2020թ. 44-օրյա պատերազմի հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքում՝ դրա դիմաց ստանալով 5.000.000 դրամի չափով աջակցություն, ինչպես նաեւ 12.000.000 դրամի չափով մուրհակ, իսկ ԱՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը զրկվել է սեփականության իրավունքով ձեռք բերած, 17.000.000 դրամ արժողությամբ տրակտորը տնօրինելու, տիրապետելու իրավունքից. տեղեկացնում են ԱՀ դատախազությունից:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերոհիշյալ տրակտորը հայտնաբերվել է ՀՀ Էջմիածին քաղաքում: Նկարագրված դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, իրականացվում է հետաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 44 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հայտարարում է երիտասարդական կենտրոնների ստեղծման նպատակով դրամաշնորհի հատկացման մրցույթ: ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից տեղեկանում ենք՝ մրցույթի շրջանակում նախատեսվում է ՀՀ մարզերում երիտասարդական կենտրոնների (կամ երիտասարդական միջավայր) ստեղծման նպատակով հաղթող մասնակիցներին անհատույց տրամադրել դրամական հատկացում: Մասնակիցները կարող են մրցույթին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Ընդհանուր դրամաշնորհային ֆոնդը կազմում է 52 մլն 644 հազար (հիսուներկու միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար՝ ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամ: Մրցույթի շրջանակում հաղթող կարող են ճանաչվել 1-ից ավելի մասնակիցներ: Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը (կազմակերպությունը) պետք է բավարարի հետեւյալ նվազագույն որակավորման չափանիշներիը՝ առնվազն 3 տարվա երիտասարդական կենտրոնի կառավարման փորձառություն (սոցիալական ձեռնարկատիրական մոդելով երիտասարդական աշխատանքի կազմակերպման փորձառության առկայությունը կդիտվի առավելություն), ծրագրի աշխատակազմի փորձառություն (ծրագրի աշխատակազմը պետք է ունենա երիտասարդական աշխատանքի 3 տարվա փորձառություն), սոցիալական ձեռնարկատիրական մոդելի առկայություն, կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ տարածք: Հաղթող մասնակիցների դրամաշնորհային հայտով ներկայացված հաջորդող հինգ տարիների ընթացքում իրականացվելիք ծրագրերում յուրաքանչյուր տարվա կտրվածքով ընդգրկվող շահառուների թիվը պետք է կազմի առնվազն 200 երիտասարդ: Մրցույթին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչեւ 2023 թվականի փետրվարի 20-ը՝ ժամը 11:00-ն:

ՍՏԱՑՎԵԼ Է 40 ՀԱՅՏ

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար, Արամ Խաչատրյանի 120-ամյակի հոբելյանական հանձնաժողովի նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ՝ ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել վերոնշյալ հանձնաժողովի առաջին նիստը: Հոբելյանական միջոցառումների ծրագրի շրջանակում աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծված հանձնաժողովի անդամները ներկայացրել են նախապատրաստական աշխատանքները, առաջիկա անելիքները: Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ Արամ Խաչատրյանի 120-ամյակի հոբելյանական միջոցառումների ցանկում ընդգրկվելու համար ստացվել է շուրջ 40 հայտ: Ծրագրի շրջանակում նախատեսվում են հյուրախաղեր, փառատոններ, կրթական միջոցառումներ, ձայնագրություններ, նամակների ժողովածուի հրապարակում, Արամ Խաչատրյանի մասին պատմող տարբեր անդրադարձներ, միջազգային մրցույթ, եզակի նյութերի ցուցադրություն եւ այլն:

ՆԻՍՏ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

Փետրվարի 3-ին տեղի ունեցավ Ներքին գործերի նախարարության ոստիկանության կոլեգիայի նիստը, որի ընթացքում ամփոփվեցին ՆԳՆ ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների 2022 թ. օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքները: Նիստը վարում էր ներածական խոսքով հանդես եկավ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանը: Նիստին մասնակցում էին ոստիկանության կոլեգիայի անդամներ, կենտրոնական աparատի, մարզային եւ տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ: Ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների 2022 թ. օպերատիվ-ծառայողական գործունեության վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՆԳՆ ոստիկանության իրական ոստիկանության գլխավոր վարչության պետ Վարդան Վարդանյանը:

Զեկուցողը նշեց, որ հաշվետու տարում ոստիկանությունը կատարել է իր առջեւ դրված խնդիրները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, պահպանվել է կայուն հասարակական կարգն ու անվտանգությունը: Վերլուծելով հանրապետությունում արձանագրված հանցագործությունների շարժընթացը՝ Վարդան Վարդանյանն արձանագրեց, որ 2022 թվականին հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է 24,4%-ով, ընդ որում՝ 7367 դեպքից 3602-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու, 997-ը՝ ծանր վիրավորանք հասցնելու, իսկ 743-ը՝ առավել լատենտային համարվող՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, եւ 173-ը՝ զենքի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման թիվն է:

Գրանցված 37 612 դեպքերի հիմնական մասը ոչ մեծ (56,6 %) եւ միջին ծանրության (27,6 %) հանցագործություններն են, որոնք համարվում են առավել նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող հանցատեսակներ եւ կազմում են գրանցված ընդհանուր հանցագործությունների 84,2 %-ը:

Ըստ հիմնական հանցատեսակների՝ աճել են դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, խուլիգանության, ավազակության, կողոպուտի, խարդախության, համակարգչային տեխնիկայի միջոցով կատարված հափշտակությունների դեպքերը: Միեւնույն ժամանակ, նվազել են սպանության (առանց հանկարծամահության դեպքերի), սպանության փորձերի, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, գողության, այդ թվում՝ բնակարանային գողության, յուրացման կամ վատնման եւ տրանսպորտային միջոցներ փախցնելու դեպքերը: Տարվա ընթացքում հանրապետությունում գրանցվել է մարդկանց թրաֆիքինգի 8 դեպք: Ոստիկանության մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում առգրավվել եւ բացատրական աշխատանքի շնորհիվ կամավոր հանձնվել է 1245 (2021 թվականին՝ 943) միավոր զենք: 2022 թվականին 76,3 %-ով աճել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի թիվը, դրան զուգընթաց՝ հայտնաբերվել են 94,9 %-ով ավելի թմրամիջոցների իրացման դեպքեր:

Արձանագրվել է 4308 ճանապարհատրանսպորտային պատահար, որոնց հետեւանքով զոհվել է 321, եւ մարմնական վնասվածքներ է ստացել 6155 անձ: Նախորդ տարվա համեմատությամբ պատահարների թիվը նվազել է 296-ով, զոհերինը՝ 47-ով, վիրավորներինը՝ 544-ով:

2022 թ. ընթացքում ոստիկանության ծառայողների նկատմամբ կատարվել է 1802 (2021 թվականին՝ 1771) ծառայողական քննություն, ինչի արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 709 (նախորդ տարի՝ 587) ծառայող:

0,5 ԿԳ ԹՄՐԱՄԻՋՈՑ

ՀԱՍՑԵԱՏԵՐԸ ՀԱՅՏՆԻ Է

Պետական եկամուտների կոմիտեի հարավային մաքսատուն-վարչությունը եւ մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում են անընդմեջ պայքարն Ագարակ պետական սահմանի անցման կետով թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի տեղափոխման խափանման եւ կանխման ուղղությամբ:

Օրերս Մեղրիի մաքսային կետ-բաժնում իրականացվող մաքսային հսկողության շրջանակում Իրանից Հայաստան ժամանած բեռնատարի մաքսային զննման ժամանակ վարորդի վարքագիծը կասկած է առաջացրել մաքսային ծառայողների մոտ, եւ որոշում է կայացվել իրականացնել անձնական մաքսային զննում:

Արդյունքում Մեղրիի մաքսային կետ-բաժնի աշխատակիցներն ԻԻՀ քաղաքացի Ֆ. Ա.-ի հագուստի տակ թաքցված փաթեթներից, ինչպես նաեւ վերարկուի գրպանում առկա փաթեթներից հայտնաբերել են մաքսային հսկողությունից թաքցված մոտ 100 գրամ քաշով Մեթամֆետամին տեսակի եւ մոտ 344 գրամ Մարիխուանա տեսակի թմրամիջոցներ:

Հայտնաբերված թմրամիջոցները, ինչպես նաեւ այն ՀՀ տեղափոխած անձին Հարավային մաքսատուն-վարչությունն անմիջապես փոխանցել է ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու նպատակով:

Նույն օրը ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցները ձեռնարկել են մի շարք օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Տեղեկություններ են ձեռք բերվել, որ ԻԻՀ քաղաքացու մոտ հայտնաբերված թմրամիջոցները վերջինս պետք է փոխանցի այլ անձանց Գորիս-Երեւան մայրուղու հարակից տարածքում եւ Երեւան քաղաքի տարբեր հատվածներում: Մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում տեղեկություններ են ստացվել նաեւ, որ ԻԻՀ քաղաքացու՝ մաքսանենգությամբ Հայաստան տեղափոխած հիշյալ թմրամիջոցները ՀՀ-ում պետք է ստանան ոմն Է. Պ.-ն եւ Ա. Թ.-ն:

Մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների ձեռնարկած անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների, մասնավորապես՝ «Վերահսկելի մատակարարում եւ գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում, հիշյալ թմրամիջոցի զանգվածները մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցների վերահսկողության ներքո տեղադրվել են «Հյուսիս-հարավ» մայրուղու Երեւան-Արտաշատ հատվածի՝ Արտաշատ քաղաքի կամրջի հարակից տարածքում, եւ հիշյալ զանգվածները ստանալուց հետո ձերբակալվել եւ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ երկու քաղաքացի, ինչպես նաեւ Ուկրաինայի մեկ քաղաքացի. վերջիններս տեղափոխվել են ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն: Փաստի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, կատարվում է նախաքննություն:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Արցախի կառավարությունը ներկայացրել է շրջափակման 54-րդ օրվա տեղեկագիրը փետրվարի 2-ի դրությամբ:

Օրվա վիճակագրական թարմացումներ

7 երեխա գտնվում է մանկական հիվանդանոցի նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքներում:

12 չափահաս բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 5-ը ծայրահեղ ծանր վիճակում է: Արդեն 194 երեխա ծնվել է շրջափակման մեջ: Արցախի առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բոլոր բուժհաստատություններում պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով 568 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից:

Մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել 64 հիվանդ համապատասխան բուժում ստանալու համար: Ստեղծված տնտեսական բարդ իրավիճակի պատճառով նախնականորեն առնվազն 5100 մարդ կորցրել է աշխատանքը եւ եկամտի աղբյուրը: Ավելի քան 21.200 տոննա կենսական նշանակության ապրանքներ կմատակարարվեին Արցախ, եթե չլիներ շրջափակումը, որի ընթացքում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից մատակարարվել է դրա միայն չնչին մասը:

Կարեւոր փաստեր

Ադրբեջանի կառավարության գործակալները ահաբեկչական գործողություններով 53 օր շարունակ շրջափակման պայմաններում պատանդ են պահում Արցախի 120.000 բնակչությանը:

Շրջափակման պատճառով Արցախի 120.000 բնակչությունը (ներառյալ՝ շուրջ 30.000 երեխա, 20.000 տարեց, 9000 հաշմանդամություն ունեցող անձ) կրում է բազմաթիվ զրկանքներ եւ, ի թիվս այլ իրավունքների խախտման, կանգնած է թերսնման եւ ցրտահարման մեծ ռիսկի առջեւ:

Շրջափակման պայմաններում սննդի սրացող սղության պատճառով հունվարի 9-ից փակվել են 41 մանկապարտեզ, 20 երկարօրյա ուսումնական հաստատություն:

5528 երեխա այլեւս չի կարողանում մանկապարտեզ հաճախել՝ զրկվելով համապատասխան խնամք եւ սնունդ ստանալու հնարավորությունից:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կառավարությունը հաստատել է Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման ծրագիրը եւ դրանից բխող 2023-2026 թթ. գործողությունների ծրագիրը, որի նպատակն է կարգավորել ոլորտում ծառացած տարբեր բնույթի խնդիրները, իրականացնել բարեփոխումներ, ինչի արդյունքում կաղահովվի արդյունավետ ու կայուն զարգացում: Հիմնավորման համաձայն՝ հագուստի եւ հագուստի պարագաների արդյունաբերությունը ՀՀ արտահանմանն ուղղված 11 ռազմավարական ոլորտներից մեկն է, որը հադիսանում է երկրում զբաղվածության ապահովման կարեւոր աղբյուր՝ կանանց ավելի քան 90 տոկոս ներգրավվածությամբ: 2020թ.-ին ոլորտում աշխատել է 7400 մարդ կամ 1,5 անգամ ավելի, քան 2017 թ.-ին: Ոլորտը, 2021 թվականին ունենալով շուրջ 6 մլրդ դրամի արտադրական ներուժ, Հայաստանի արդյունաբերության համար կարեւոր ճյուղ է հանդիսանում: Չնայած ընդհանուր արդյունաբերության մեջ տեքստիլի փոքր մասնաբաժնին՝ վիճակագրական վերլուծությունները եւ արտադրական ընկերությունների հետ հարցազրույցները վկայում են ոլորտի զարգացման մեծ ներուժի եւ երկրի սոցիալական կյանքում դրա կարեւոր դերի մասին: 2020 թ.-ին ոլորտում գործել է 153 ընկերություն, որոնց մեծ մասը փոքր եւ միջին ձեռնարկություններ են եղել:

Վերջին 10-20 տարիների ընթացքում Հայաստանի տեքստիլ ոլորտում ձեւավորվել են խոշոր արտադրողներ եւ հայտնի ապրանքանիշեր: Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի տվյալներով՝ 2021 թ. խոշոր հարկատուների ցանկում ընդգրկվել է 11 տեքստիլ ընկերություն՝ ի տարբերություն 2017 թ. 8 ընկերությունների: Ոլորտն ունի արտահանման մեծ ներուժ: Չնայած 2019 եւ 2020 թվականների արտահանման անկմանը (20 տոկոս)՝ այնուամենայնիվ, Հայաստանից տեքստիլ արտադրանքի արտահանման աճը 2011-2020 թվականներին միջինում կազմել է տարեկան ավելի քան 40 տոկոս: 2020 թ.-ին հագուստ եւ հագուստի պարագաներ (բացի տրիկոտաժե մեքենայագործ կամ ձեռագործ հագուստից եւ պարագաներից) խմբի ապրանքներն արտահանման մեջ ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ կազմելով 69 տոկոս, իսկ տրիկոտաժե հագուստ եւ հագուստի պարագաներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ խմբի արտադրատեսակները՝ շուրջ 25 տոկոս: Ծրագրով, որպես առաջարկվող միջոցառումների ներոլորտային տնտեսական հետեւանք, սահմանվել է 6 արդյունք՝ տեքստիլի արդյունաբերության մեկ աշխատողի միջին աշխատավարձը, տեքստիլ արդյունաբերության արտահանման դիվերսիֆիկացիա՝ ըստ արտահանման շուկաների, տեքստիլ արդյունաբերության հումքի ներմուծման դիվերսիֆիկացիա՝ ըստ ներմուծման շուկաների, 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված տեքստիլ ընկերությունների վճարած հարկերի ծավալը, ռազմավարական ծրագրերի տարեկան ծախսերի հարաբերակցությունը 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված տեքստիլ ընկերությունների կողմից վճարվող հարկերի տարեկան աճի ծավալին: Ծրագրի շրջանակում աջակցության միջոցառումներն ուղղված են ոլորտի շահառուների 4 հիմնական խմբերի՝ տարեկան ընտրված ավելացված արժեքի շեմից բարձր գտնվող, տեքստիլ ոլորտի բոլոր, սահմանամերձ բնակավայրերում տեղակայված տեքստիլ ընկերություններ եւ տեքստիլ այն ընկերությունները, որոնք մեծացնում են արտադրանքի բարդության ինդեքսը:

Կարեւորվել են 10 հիմնական ուղղություններ, մասնավորապես՝ բարելավել տեքստիլ ոլորտի աշխատողների մրցունակությունը, օպտիմալացնել եւ արդիականացնել բիզնես գործընթացները՝ նպաստելով արդյունավետության եւ արտադրողականության բարձրացմանը, արդիականացնել տեքստիլ արդյունաբերության արտադրական օբյեկտները՝ ներդնելով բարձր տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն ավելի բարդ եւ բարձր ավելացված արժեքով արտադրանքի ստեղծմանը, ապահովել եւ խրախուսել հայկական ապրանքանիշերի ներկայացվածությունը նոր սպառողական շուկաներում եւ այլն:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Առօրյա բանկային գործարքները «Կոնվերս բանկ»-ի իրավաբանական անձ հաճախորդներին այսուհետ հասանելի են 24/7 ռեժիմով, անգամ՝ առանց համակարգչի հասանելիության:

Բանկի գործարկած Converse Business հավելվածից օգտվելու համար իրավաբանական անձինք նոր հմտությունների կարիք չունեն. այն նախագծված է ամենատարածված՝ ՀԾ-բանկ համակարգի հիման վրա եւ ֆունկցիոնալ իմաստով նման է Ինտերնետ-բանկ համակարգին:

Հավելվածը հարմարավետ ու անվտանգ է. Converse Business-ով գործարքների ապահովությունը երաշխավորված է ժամանակակից երկգործոն նույնականացման այնպիսի համակարգերով, ինչպիսիք են Digipass անվտանգության սարքերը, Google Authenticator հավելվածը:

Converse Business-ով հաշված րոպեների ընթացքում հնարավոր է իրականացնել փոխանցումներ եւ վճարումներ, այդ թվում՝ խմբային եղանակով, ստեղծել փոխանցումների ձեւանմուշներ, ներդնել ժամկետային ավանդ, իրականացնել վարկի մարում, ստուգել հասանելի մնացորդներ ու գործարքների կարգավիճակներ, արտահանել վճարման հիմքեր ու քաղվածքներ, բանկին հաստատագրել տարբեր գրություններ եւ նամակներ:

Այն կարող է ունենալ մեկ կամ մի քանի օգտագործող՝ տարանջատված իրավասություններով, ինչի շնորհիվ կապահովվի վճարային գործարքների հաստատման աստիճանակարգությունը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆՈՐ ՄՈԴԵԼԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը հանդիպել է նախարարության ենթակայությամբ գործող թանգարանների տնօրենների հետ՝ քննարկելու թանգարանների կառավարման նոր մոդելի ներդրման եւ զարգացման հնարավորությունները:

Նոր մոդելով առաջարկվում է ստեղծել Թանգարանների կառավարման հիմնադրամ, որը կիրականացնի թանգարանների կառավարման եւ առաջխաղացման, մասնավորապես՝ կազմակերպատնտեսական, անձնակազմի կառավարման, ֆինանսական եւ հանրահռչակման գործառույթները: Ծառայությունների զգալի մասը նախատեսվում է մրցութային ընթացակարգով արտապատվիրակել մասնավոր ընկերություններին:

Ներկայացնելով թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով նոր ինստիտուցիոնալ միավորի ստեղծման հայեցակարգային եւ ծրագրային առանձնահատկությունները՝ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը կարեւորել է թանգարանների տնօրենների ներգրավվածությունը եւ գործընթացի արդյունավետ կազմակերպման շրջանակում վերջիններիս կողմից առաջարկների եւ դիտարկումների ներկայացումը:

Նշվել է, որ կառավարման նոր մոդելը հնարավորություն կտա իրականացնելու թանգարանների կառավարչատնտեսական համակարգված կառավարում մեկ կենտրոնից, վարել ֆինանսական եւ անձնակազմի ներգրավման ճկուն քաղաքականություն՝ միաժամանակ նպաստելով տնօրենների եւ մասնագիտական ներուժի գիտահետազոտական աշխատանքի արդյունավետ իրականացմանը եւ թանգարանների գիտակրթական գործունեության զարգացմանը:

Թանգարանների կառավարման նոր մոդելի ներդրման ծրագիրը ներառվել է ՀՀ մշակույթի պահպանության եւ զարգացման 2023-2027 թթ. ռազմավարության նախագծում:

Գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով նախատեսվում են շարունակական քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ:

ՊՈԵԶԻԱ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

«ՆՎԵՐ՝ ՍԻՐԵԼԻ ԿՆՈՋԸ»

Գարնան տոների առթիվ մարտի 9-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի կունենա ռուսական պոեզիայի վարպետ, հաղորդավար Վլադիմիր Գլազունովի մոնոներկայացումը: «Նվեր՝ սիրելի կնոջը» ներկայացումը կուղեկցվի կոմպոզիտոր Սերգեյ Սիրոտինի երաժշտությամբ:

Երեկոյին կհնչեն ինչպես ժամանակակից, այնպես էլ ռուս դասականների ստեղծագործություններ: Ուղեկցվող երաժշտության մեծ մասը գրվել է հատուկ այս ներկայացման համար:

Վլադիմիր Գլազունովի եւ Սերգեյ Սիրոտինի համագործակցությունը սկսվել է 2019 թվականին: Նրանց համատեղ աշխատանքի արդյունքում թողարկվել է մի քանի աուդիոգիրք, նրանք ելույթ են ունեցել ՌԴ 10 քաղաքներում, հյուրախաղերով հանդես եկել Ղազախստանում եւ Ղրղզստանում: Հայ հանդիսատեսի առաջ արվեստագետները ելույթ կունենան առաջին անգամ: Սերգեյ Սիրոտինը հայտնի է որպես Golden Light Orձhestra նախագծի հեղինակ: Կոմպոզիտորը գրել է ավելի քան երկու հարյուր ստեղծագործություն, որոնք հրապարակվել են ամբողջ աշխարհում: Վլադիմիր Գլազունովը հանրության լայն շրջանակին հայտնի է որպես «Ծնված ԽՍՀՄ» հաղորդաշարի հաղորդավար: Հաղորդումը հեռարձակվում է «Կարոտ» հեռուստաալիքի ուղիղ եթերում: Գլազունովն ունեցել է ավելի քան 4000 ուղիղ եթեր ամենավառ արվեստագետների, բանաստեղծների, քաղաքական գործիչների, գրողների, արվեստագետների, մարզիկների եւ երաժիշտների հետ: Արդեն մի քանի տարի է՝ արտիստը հանդես է գալիս որպես ժամանակակից պոեզիայի ընթերցող: Ժամանակակից բանաստեղծների արվեստը խթանելու համար Վլադիմիր Գլազունովին շնորհվել է «Ստեղծելով աշխարհը» համառուսաստանյան արվեստի 1-ին մրցանակ՝ «Գրականության ոլորտում ունեցած ավանդի համար» անվանակարգում:

ԼՈՒՐԵՐ

ԱՄՆ–Ն ԴԵՄ Է

ԱՄՆ-ում կարծում են, որ Ռուսաստանից եւ Բելառուսից մարզիկներն օլիմպիական խաղերին մասնակցելու դեպքում չպետք է հանդես գան իրենց երկրների դրոշների ներքո: Այս մասին հայտարարել է Սպիտակ տան ներկայացուցիչ Կարին Ժան Պիեռը լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում:

«Այն դեպքերում, երբ սպորտային կազմակերպությունները եւ միջոցառումների կազմակերպիչները, ինչպիսին Միջազգային օլիմպիական կոմիտեն (ՄՕԿ) է, որոշեն թույլ տալ Ռուսաստանից եւ Բելառուսից մարզիկներին մասնակցելու միջոցառումներին, պետք է միանգամայն պարզ լինի, որ նրանք չեն ներկայացնում կոնկրետ Ռուսաստանը կամ Բելառուսը», - հայտարարել է Ժան Պիեռը՝ պատասխանելով այն հարցին՝ արդյոք այս երկրներից մարզիկները կարող են մասնակցել Փարիզի օլիմպիական խաղերին:

Ըստ Սպիտակ տան ներկայացուցչի՝ Ռուսաստանի կամ Բելառուսի դրոշների, խորհրդանշանների կամ օրհներգերի օգտագործումը նույնպես պետք է արգելվի նման մրցույթներում: Ժան Պիեռը նշել է, որ ԱՄՆ-ն ժամանակին աջակցել է Ռուսաստանի եւ Բելառուսի մարզական ղեկավար մարմինների հեռացմանը միջազգային սպորտային ֆեդերացիաներից: Փետրվարի 2-ին ՄՕԿ-ում հայտարարել էին, որ առայժմ չի քննարկվում ռուսաստանցի կամ բելառուս մարզիկների մասնակցության թույլտվությունը 2024 թ.-ին Փարիզում կայանալիք ամառային օլիմպիական խաղերին:

Միաժամանակ կազմակերպությունը նշել է, որ ռուսաստանցիներին ու բելառուսներին օլիմպիական խաղերին մասնակցել կարող են թույլատրել չեզոք կարգավիճակով (առանց ազգային դրոշի, օրհներգի կամ դրանց գույների որեւէ զուգորդման) եւ հակադոպինգային կանոնների լիարժեք պահպանմամբ: Ուկրաինայում ստեղծված իրադրության պատճառով ՄՕԿ-ը 2022 թ. փետրվարին միջազգային ֆեդերացիաներին հանձնարարել էր հեռացնել ռուսաստանցիներին եւ բելառուսներին: Ֆեդերացիաների մեծամասնությունը հետեւել է ՄՕԿ-ի հանձնարարականներին:

ԱՃՈՒՐԴԻ Է ՀԱՆԵԼ ԲԱՃԿՈՆԸ

«Եվրատեսիլ 2022» երգի մրցույթում Հայաստանը ներկայացրած երգչուհի Ռոզա Լինը աճուրդի է հանում իր բաճկոնը, որի վրա գրված է «Դադարեցրե՛ք շրջափակումը» (STOP THE BLOCKADE):

«Ես իմ #STOPTHEBLOCKADE բաճկոնը նվիրաբերում եմ ՀԲԸՄ-ի՝ շաբաթ օրվա դրամահավաքին եւ աճուրդին: Բաճկոնի վաճառքից ստացված ողջ հասույթը կտրամադրվի ՀԲԸՄ Արաբկիրի մանկական կենտրոնին», - գրել է երգչուհին:

Ռոզա Լինը iHeart Radio ALTer Ego համերգին ելույթ էր ունեցել «Դադարեցրե՛ք շրջափակումը», «Արցախ» գրություններով եւ Հայաստանի դրոշով:

● *Փետրվարի 5-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերջին կանգառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Իմ հաշիվների վրա դրված են արգելանքներ. ինչպե՞ս կատարել վճարումը եւ շուտ ազատվել դրանցից:

Մարգարիտա Գալստյան (57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկադիր ծառայությունում հարուցված կատարողական վարույթներով համապատասխան գումարների վճարումները կարող են կատարվել հետեւյալ տարբերակներով՝

-Անհրաժեշտ է մոտենալ ցանկացած վճարման (EASYPAY, TELCELL, MOBIDRAM) տերմինալի մոտ, սեղմել «Հարկադիր ծառայություն» պատուհանը, մուտքագրել Ձեր հեռախոսահամարը եւ սոցիալական քարտի համարը՝ ՀԾՀ-ն, որից հետո էկրանին կհայտնվեն տվյալներ Ձեր նկատմամբ հարկադիր ծառայությունում հարուցված վարույթների եւ արգելանքների մասին, ինչպես նաեւ տվյալներ արգելանքների համար հիմք հանդիսացող գումարների չափերի եւ պահանջատերերի մասին: Տերմինալով կարող եք ըստ հաջորդականության կատարել բոլոր վճարումները, եւ կիրառված արգելանքները կվերանան նույն օրվա ընթացքում:

-Անձնագրով եւ սոցիալական քարտով մոտենալ Հարկադիր ծառայություն՝ ք. Երեւան, Հալաբյան 41ա հասցեով, եւ տեղում սպասարկող աշխատակիցների մոտ կատարել բոլոր վճարումները: Արգելանքները կհանվեն մեկ օրվա ընթացքում:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարում

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համապատասխան վճարումները կարող եք կատարել նաեւ ՀՀ-ում գործող ցանկացած բանկի մասնաճյուղում, «Հայ փոստ» ՓԲԸ-ի բաժանմունքներում, եւ այս տարբերակի դեպքում պետք է Ձեզ հետ ունենաք անձնագիր, սոցիալական քարտ եւ հարկադիր կատարողի համապատասխան որոշման օրինակը, որի հիման վրա՝ կկա-տարվի վճարումը: Արգելանքը վճարումից հետո կհանվի երեք օրվա ընթացքում:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Դատավորը, իմ կարծիքով, ցուցաբերում է կողմնակալություն. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Կոմիտաս Հայրապետյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե կարծում եք, որ Ձեր գործով դատավորը խախտում է օրենքով սահմանված իր վարքագծի կանոնները, ապա դրանց խախտման վերաբերյալ կարող եք դիմում-բողոք ներկայացնել ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ, որն իրավասու է քննել դատավորների վարքագծի հետ կապված բողոքները, հարուցել կարգապահական վարույթներ եւ դատավորներին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դուք կարող եք նաեւ Ձեր գործով տվյալ դատավորին ներկայացնել բացարկ հայտնելու մասին միջնորդություն՝ խնդրելով ընդունել այն եւ Ձեր գործը փոխանցել մեկ այլ դատավորի: Դուք պետք է բացարկը հայտնեք մինչեւ նախնական դատական նիստի ավարտը, իսկ դրանից հետո մինչեւ գործի ավարտը կարող եք բացարկ հայտնել, եթե Դուք կհիմնավորեք, որ բացարկ հայտնելու հիմքերը ծագել եւ Ձեզ հայտնի են դարձել նախնական դատական նիստի ավարտից հետո: Բացարկ հայտնելու դեպքում գործի քննությունն ընդհատվում է մինչեւ այդ հարցի լուծումը: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան երեք օրով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է ԱԺ-ում

Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը խորհրդարանական լսումներ է նախաձեռնել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելու վերաբերյալ խմբակցության ներկայացրած հայտարարության առնչությամբ: ArmLur.am-ը նկատեց, որ իշխող ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը եւս մասնակցում էր ընդդիմության նախաձեռնած քննարկմանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: